ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶԱՄԵՊԻՐՈՒՆ

ՀՀ ԿԱԱ«ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ »
ԱՎՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝	ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝	ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉ՝	ՇՈՒՇԱՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԴՊՐՈՑ՝	Ս.Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոց

2022թ
ՄԱՐՏՈՒՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Թեմայի արդիականությունը</u>

""""Այսօր, երբ աշխարհում տեղի են ունենում մի շարք գլոբալ իրադարձություններ, երբ յուրովի նոր իմաստ է ստանում անձի, որպես հասարակությանլիարժեք անդամի ձևավորումըու զարգացումը,կարևորություն է ստանում երեխաների ճիշտ դաստիարակությունը, մասնավորապես կրտսեր դպրոցական տարիքում:

Ցավոք, այսօր արդեն փաստ է, որ մեր հասարակության մեջ շատ են առողջական տարատեսակ խնդիրներ ունեցող անձինք: Նրանց մեջ բավականին մեծ թիվ են կազմում նաև դպրոցահասակ երեխաները: Գաղտնիք չէ նաև, որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից շատերը իրականացնում են ներառական կրթություն, որի նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների /այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ երեխաներ/ ներառումն է հասակակիցների միջավայր, նրանց համատեղ կրթությունն ու առողջ սոցիալականացումը: Սակայն տարբեր մասնագետների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման հարցում կան բազմաթիվ դժվարություններ, մասնավորապես նրանց հանդեպ հանդուրժողականության ձևավորման հարցում:

Ժամանակակից տարրական դպրոցում բավականին մեծ թիվ են կազմում ԿԱՊԿՈՒ երեխաները, որոնց հանդեպ դեռևս թե դպրոցում և թե դպրոցից դուրս ցուցաբերվում է անհանդուրժողական վերաբերմունք: Նրանց հաճախ ծաղրում են, արհամարհում, նրանց հետ ընկերություն չեն անում, չեն օգնում և այլն: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու հիմնավորված է դրա արդիականությունը:

Հետևաբար, հաշվի առնելով ներկա ժամանակների մարտահրավերները՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետառողջ փոխհարաբերությունների,համագործակցության և հանդուրժողականության ձևավորումըշատ կարևոր է թե մանկավարժների, թեծնողներիևթեաշակերտների համար:

ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորումը ներկայիս ամենից շատ քննարկված ու միևնույն ժամանակ

ամենաքննադատված երևույթներից է: Հանդուրժողականության մասին ձևակերպումները բազմաթիվ են, այդ պատճառով էլ այս հասկացության հստակ ձևակերպման խնդիրը շարունակում է արդիական մնալ:

<u>Հետազոտության նպատակը</u>

Տարրական դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուժողականության ձևավորման գործընթացի ուսումնասիրումն է և դրա համար արդյունավետության պայմանների մշակումը:

<u>Հետազոտության խնդիրներն են՝</u>

1. Ուսումնասիրել և վերլուծել հանդուրժողականություն հասկացությունը:
2. Համագործակցությունը և հանդուրժողականությունը հիմնավորել որպես տարրական դպրոցում ներառական կրթության իրականացման կարևոր մեխանիզմներ:
3. Մշակել տարրական դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուժողականության ձևավորման համար արդյունավետության պայմաններ:

<u>Մագիստրոսական թեզի կառուցվածքն ու ծավալը</u>

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ընդհանուր ծավալը՝ 33 էջ:

ԳԼՈՒԽ 1.

ՏԱՐՐԱԿԱՆԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿՊԱՅՄԱՆՆԵՐԻԿԱՐԻՔՈՒՆԵՑՈՂԵՐԵԽԱ ՆԵՐԻՀԱՆԴԵՊՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋ

1.1 Հանդուրժողականությունը որպես հումանիզմի դրսևորում

Ժամանակակից համաշխարհայնացվող աշխարհում հանդուրժողականությունը բազմակողմանի ուսումնասիրության արժանի խնդիրներից է: «Վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում հանդուրժողականությունը դարձել է առավել արդիական և լայն տարածում ունեցող խնդիրներից մեկը: Այն քննարկվում է տարբեր մակարդակներում, տարբեր կողմերով՝ ներառելով տարբեր խնդիրներ» [6; 246]:

Հանդուրժողականություն կամ տոլեռանտություն տերմինը առաջացել է լատիներեն՝ tolerantia բառից, որը նշանակում է՝ համբերություն, կայունություն ուրիշների նկատմամբ և դժվարությունների ինքնակամ ընդունում [12; 26]:

Հայերենում հանդուրժել նշանակում է՝ 1) դիմանալ, տոկալ, համբերել, 2)ընդունակ լինել մի բան կրելու, կարողանալ կրել,տանել մի բան, 3) թույլատրելի համարել, հաշտվել մի բանի հետ [3; 819]:

Հանդուրժողականությունը հանրագիտարանային բառարանում ունի երեք իմաստ.

Առաջինը զուտ բժշկական է. իսկ մյուս երկուսն ավելի մոտ են հոգեբանությանը և նկարագրում են հանդուրժողականությունը որպես՝

- օրգանիզմի ունակություն՝ կրելու շրջական միջավայրի այս կամ այն գործոնի բացասական ազդեցությունը,
- հանդուրժողականություն ուրիշների կարծիքների, համոզմունքների, վարքագծի հանդեպ:

Հոգեբանական բացատրական մեծ բառարանում նույնպես առանձնացվում է «Հանդուրժողականության» երեք իմաստ .

- հանդուրժողականությունը դիտարկվում է որպես ուրիշների վարքի մոդելներ, համոզմունքների և արժեքների ազատական ընդունման դիրքորոշում,

- սթրեսը, ցավը, լարվածությունը առանց լուրջ վնասի հանդուրժելու կարողություն
- բժշկական[17]:

Ուշակովիբացատրականբառարանում - терпимость համբերատարությունուրիշիկենսակերպի, վարքի, սովորույթների, զգացմունքների, տեսակետների, հավատքինկատմամբ[21; 726]:

Հանդուրժել նշանակում է ուրիշին իր սեփական աշխարհայացքով ապրելու իրավունք վերապահել: Դա չի նշանակում լռել, այլ նշանակում է մեր էությանը խորթ վարքը, տարակարծությունը, այլ անձի ազատությունները հարգելով հանդերձ կարծիք արտահայտել, փորձել համոզել վերանայել տեսակետները, բայց ոչ երբեք ստիպել: Ստիպել, անզուսպ պայքարել կնշանակի անհանդուրժողականություն ցուցաբերել [15; 182]:

Հանդուրժողականությունը այլոց կարծիքի, համոզմունքների և տեսակետների հանդեպ արդարացի լինելն է, նաև՝ դրանք ընկալել կարողանալը: Հանդուրժողականությունը ենթադրում է հարգանք այլոց իրավունքների հանդեպ:

Հանդուրժողականության բարոյական իմաստն ամփոփվում է նրանում, որ հիմքում ընկած է ոչ թե համբերությունը՝ որպես անձնային որակ, այլ ուրիշի ազատությունների հանդեպ հարգանքը, այն գիտակցումը, որ ազատությունն այլ է քան ամենաթողությունը, և, որ իմ ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուսի ազատությունը: «Այդ երկու կողմերի ազատությունների սահմանագծում են ծագում կոնֆլիկտներն ու բռնությունը՝ որպես խնդիրը լուծելու միջոց, որին ընդդիմանալ կարող է միայն հանդուրժող գիտակցությունն ու վարքը» [5; 8]:

Հանդուրժողականությունը ինքնավստահության և սեփական դիրքերի հուսալիության գիտակցության նշան է:

Համագործակցային ուսուցման կարևորագույն հետևանքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն են, քանի որ անհատականությունը «ձևավորվում է մարդկանց հետ շփման արդյունքում: Մարդկանց հետ փոխառնչվելու արդյունքում, մենք ավելի լավ ենք հասկանում ինքներս մեզ»:

Ուրիշի իրավունքների հարգում ՝ բոլոր մարդիկ ունեն հավասար ի ր ավ ո ւ ն ք ն ե ր , և այդ իրավունքներն անօտարելի են՝ անկախ իրավունքի տեսակից, բնակության վայրից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, ազգային պատկանելությունից կամ կրոնից:

Նման չլինելու իրավունքների հարգում՝անկախ անձի արտաքին և մտավոր տվյալների տարբերությունների, յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել նրանց իրավունքները, նա պետք է դիտվի որպես հասարակության լիիրավ անդամ:

Բռնության և գերիշխում իրականացնելու հրաժարում ՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի շրջապատի կողմից և՛հարգված,և ՛ընդունված լինելու իրավունք,և զերծ լինի որևէ մեկի կողմից բռնության և գերիշխանության տակ լինելուց:

Փիլիսոփայական տեսանկյունից հանդուրժողականությունը մեկնաբանվում է նաև որպես ավելի շատ պասիվ մոտեցում հավասարության ճանաչմանը: Այն պարզապես խթանում է համակեցությունը հանուն խաղաղության [24; 132]:Այսպիսի մեկնաբանումն ավելի շատ է մոտեցնում «հանդուրժողականություն» և «անտարբերություն» կամ «չեզոքություն»

հասկացությունները տվյալ համատեքստում: Համաձայն վերոնշյալ մոտեցման, եթե մենք ցանկանում ենք ձևավորել կենսունակ բազմազանություն, ապա միայն հանդուրժողականությունը բավարար չէ: Անհրաժեշտ է ընդունել ոչ միայն տարբերությունների առկայությունը, այլ նաև միմյանց վրա ունեցած ազդեցությունը:

Եվրոպական մշակույթում «հանդուրժողականության» գաղափարը հանդիսանում է հիմնարար արժեքներից մեկը:Դարեր շարունակ եվրոպացի մտածողները զարգացրել են հանդուրժողականության տարբեր ասպեկտներ: Նրա առաջին պատմական ձևը եղել է մտքի և կրոնի, ազատության գաղափարները: Նմանատիպ մոտեցումը առաջին անգամ ձևակերպել է անգլացի փիլիսոփա Ջոն Լոկը[22; 25]:

1995 թվականին ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից նոյեմբերի 16-ը հռչակվել է ամենամյա հանդուրժողականության միջազգային օր՝ հասարակության ուշադրությունը հրավիրելու անհանդուրժողականության վտանգների վրա: Հրատարակվել է «Հանդուրժողականության սկզբունքների հռչակագիրը»: Հռչակագրի հոդված 1.1-ում սահմանվում է «հանդուրժողականություն» հասկացությունը որպես ինտեգրատիվ կամ հավաքական եզրույթ, որը մեկնաբանվում է երեք այլ եզրույթների՝ **հարգանքի, ընդունման և արժևորման** միջոցով: Դա առաջացնում է որոշակի շփոթություն, քանի որ այդ եզրույթներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն հայեցակարգային ընկալումը և տարբեր կերպ է մեկնաբանում մարդու վարքի բնույթը՝ ուղղված «այլ» լինելուն(otherness): Մեկ այլ փորձ է արվում սահմանելու հանդուրժողականությունը հոդված 1.4-ում, որի համաձայն դա նշանակում է, որ «յուրաքանչյուր մարդ ազատ է հավատարիմ մնալու սեփական համոզմունքներին և ընդունում է մյուսների՝ իրենց համոզմունքներին հավատարիմ մնալը»: Հանդուրժողականությունն ընկալվում է որպես այն փաստի ընդունում, որ մարդիկ և նրանց ինքնարտահայտման ձևերն ի սկզբանե, բնականոն կերպով բազմազան են [24; 131]: Հանդուրժողականության մասին խոսելիս հնարավոր չէ շրջանցել հանդուրժողականության մակարդակի կամ աստիճանների մասին հարցը, քանի որ տարբեր հարցերի նկատմամբ մարդկանց վերաբերմունքը տարբեր է լինում:

Հանդուրժողականությունը բազմազանության ընդունումն է և մարդու կարողությունը ճանաչելու սեփական վախերը, օբյեկտիվորեն գնահատելու իր վերաբերմունքն այն մարդկանց նկատմամբ, որոնց հայացքները, կենսակերպը, կրոնը, ազգությունը և այլ բնութագրիչները տարբերվում են իր ունեցածից [25] : Խաղաղ համակեցության ապահովումը կախված է նրանից, թե ինչ են մարդիկ մտածում միմյանց մասին, և ինչպիսի դիրքորոշումներ են ընկած «այլ»-ի նկատմամբ վերաբերմունքի ու վարքի հիմքում: Հանդուրժողականությունը մշակութային բազմազանության համատեքստում ընկալվում է որպես էական պայման և միջոց ներդաշնակ համակեցության ապահովման համար:

Հանդուրժողականությունը անձի հատկանիշ է, որի միջոցով նա վերաբերմունք է ցույց տալիս այս կամ այն երևույթի նկատմամբ՝ առաջնորդվելով իր արժեքներով, բարոյականությամբ, դաստիարակությամբ ու մշակույթով: Մյուս կողմից հանդուրժողականությունը կարող է հանդես գալ իբրև ընտանիքի, սոցիալական այլ խմբի, հասարակության վարքագծային մոդել կամ նորմ, որի համաձայն էլ այդ խումբը կամ ընտանիքն իր ուրույն համակեցության նորմերն է ձևավորում՝ կախված տարբեր իրավիճակներից: Միևնույն ժամանակ տեսաբաններից շատերը զգուշավոր են հանդուրժողականության հարցում՝ դրանում տեսնելով վտանգավոր ադապտացիոն ու կոնֆորմիստական մեխանիզմներ, որոնք կարող են մեծ վնաս հասցնել հասարակության արժեհամակարգին ու նրան դարձնել «զոմբի» բոլոր տեսակի վատ երևույթների նկատմամբ: Խոսքն այստեղ առավելապես վերաբերում է անտարբերության հասնող հանդուրժողականությանը, երբ քրեական օրենքները գերիշխում են պետական օրենքների նկատմամբ ու մարդիկ սկսում են «նորմալ» վերաբերել բոլոր տեսակի արատավոր երևույթների նկատմամբ: Ժողովրդավարական հասարակարգերում անհանդուրժողական դրսևորումների նկատմամբ առավել խիստ մոտեցումներ են ցուցաբերվում, երբ նմանատիպ վարքը սպառնում է հենց հասարակության հետագա գոյությանը կամ կասկածի տակ է դնում այդ հասարակության մեջ առկա հիմնական արժեհամակարգերը: Նմանատիպ հասարակարգերում օրենքի գերիշխանությունը ստիպում է անհանդուրժողական լինել այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են

ռասիզմը, սեքսիզմը, քսենոֆոբիան, քրեական տարրերը, կաշառակերությունը և այլն: Ժամանակակից աշխարհում ընթացող գլոբալիզացման գործընթացների շրջանակում հանդուրժողականությունը դիտվում է որպես կենտրոնական գաղափար բազմակուլտուրալ հասարակությունների ներսում խաղաղություն ապահովելու համար: Այնուամենայնիվ, հարկ է տարբերակել հանդուրժողականության տարբեր մոդելները, քանի որ ազգ-ազգ, ազգ-աշխարհ և այլ մակարդակներում հանդիպում ենք հանդուրժողականության միանգամայն տարբեր դրսևորումների: Հենց նմանատիպ գործընթացներն էլ ավելի են ակտուալացնում հանդուրժողականության գաղափարը, դրա շուրջ ընթացող դիսկուրսներն ու կարևորությունը ժամանակակից քաղաքակրթական հոսքերի համատեքստում:

Հանդուրժողականությունը փոխադարձ հարգանք է. հանդուրժողականություն ցուցաբերող կողմերը հարգում են միմյանց որպես ինքնավար բարոյական անհատներ, հասարակության իրավահավասար անդամներ:

Հանդուրժողականությունը արժեքների ընդունում է. այն ոչ միայն դրսևորվում է տարբեր մշակույթների և կրոնական համայնքների հանդեպ հարգանքի ձևով, այլևցուցաբերում է վերջիններիս համոզմունքների և պրակտիկայի նկատմամբ որոշակի գնահատական և վերաբերմունք: Հանդուրժողականությունը ենթադրում է պատրաստակամություն ուրիշներին ընդունելու այնպես, ինչպիսին որ կան և նրանց հետ համաձայնության վրա հիմնվածփոխհարաբերություններ:

Հանդուրժողականությունը բարոյական հատկություն է, որին բնորոշ է համբերատար վերաբերմունքը այլ մարդկանց հետաքրքրությունների, համոզմունքների, հավատալիքների, սովորույթների նկատմամբ, փոխադարձ ըմբռնման և համաձայնության հասնելու ձգտումը: Հանդուրժողականությունը քաղաքացիական հասարակության և ժամանակակից քաղաքակրթությունների ձևավորման, գոյատևման և զարգացման հիմնարար ժողովրդավարական արժեք է: Հանդուրժողականությունը պետք է գոյություն ունենա այնքան ժամանակ, քանի դեռ ի վիճակի է ապահովել միասնություն և փոխըմբռնում՝

առաջնայնությունը միշտ տալով մարդու իրավունքին, ազատությանը և անվտանգությանը:

Այսպիսով, հանդուրժողական գիտակցությունը միջմշակութային հանդուրժողականության և արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման կարևորագույն նախապայման է, իսկ հանդուրժողականության գիտակցության ձևավորումը և զարգացումը՝կարևորագույն խնդիր:Հանդուրժողականությունը հասարակության կարևորագույն նորմ և բնութագրիչ է: Այն ոչ միայն մեծագույն արժեք է, այլ նաև բարոյական իդեալ, որին պետք է ձգտեն թե՛ անհատը, թե՛ հասարակությունը:

Արդի աշխարհում հանդուրժողականության տեղն ու դերը ակնհայտ է:Պատահական չէ, որ հանդուրժողականությունը դարձել է ժամանակակից հասարակության գլխավոր արժեքներից մեկը, և նրա ձևավորումը դիտվում է որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման հիմնարար գործոն: Հանդուրժողականությունը պետք է ամենքին՝ և՛ պետության քաղաքացիներին, և՛ տարբեր մշակույթների ներկայացուցիչներին, և՛ ամուսիններին, և՛ երեխաներին, և՛ պարզապես մարդկանց, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անձնական «ես»-ը, իսկ դա նշանակում է, որ հանդուրժողականությունը դարձել է ժամանակակից կյանքիանհրաժեշտ նորմ և հասարակության սոցիոմշակութային տարածության կառուցարկման եղանակ [18; 181]:

1.2 Համագործակցությունը և հանդուրժողականությունը տարրական դպրոցում որպես ներառական կրթության իրականացման մեխանիզմներ

Կրթությունը կարևորագույն գործոն է, որն առաջատար նշանակություն ունի յուրաքանչյուր մարդու և հասարակության զարգացման գործընթացում: Այն հանդիսանում է ինչպես անհատի, այնպես էլ հասարակության զարգացման հիմք: Կրթությունը ոչ միայն որոշակի մակարդակի գիտելիքներ ստանալու միջոց է,

այլևսոցիալականևանհատականզարգացմանվճռիչգործոնէևհիմնականմիջոցներիցմեկը՝նպաստելումարդուհամակողմանիզարգացմանը:

Այսհամատեքստումառավելէարժևորվումկրթությանառանձնահատուկպայմաններիկարիքունեցողերեխաներիկրթությանկազմակերպումըինչպեսհանրակրթական, այնպեսէլհատուկդպրոցներումևնախադպրոցականհաստատություններում: Ներառականկրթությանզարգացումըպահանջումէկրթությանողջհամակարգինվերաբերողփոփոխություններիլայնտեսանկյուն[1]:

Ներառական կրթությունն ուղղված է բոլոր սովորողների կրթության իրավունքի իրացմանը՝ անկախ նրանց անհատական բնութագրից և խնդիրներից, առավել արդար հասարակություն կառուցելուն: Բայցևայնպես, ներառական կրթությունը հատուկ ուշադրություն է դարձնում մարդկանց այն խմբերին, որոնք, որպես կանոն, դուրս են մնում կրթական համակարգից: Այդ մարգինալ խմբերի առաջին շարքում ԿԱՊԿՈՒ երեխաներն են: Որպես կանոն՝ համակարգի և հասակակիցների կողմից հենց նրանք ենենթարկվում օտարացման, ճնշման և խտրականության: Նրանց հաճախ տեղավորում են առանձին դասարաններում կամ դպրոցներում, կամ էլ նրանք լրիվ զրկվում են որևէ ուսումնական հաստատություններում ընդգրկվելու հնարավորություններից: Այդ խմբին պատկանող երեխաների համար առավել կարևորվում է ներառական ուսուցման անհրաժեշտությունը:

Կրթականծառայություններիհասանելիությանխնդիրըհանդիսանումէմիջազգայինհանրությանքննարկումներիթիրախը 1990-ականներիցիվեր, երբընդունվեցիներեխաներիհիրավունքների 20 պաշտպանությանոլորտումերկուկարևորագույնփաստաթղթեր՝Երեխաներիհիրավունքներիկոնվենցիան [28]ևԿրթությունըբոլորիհամարհամաշխարհայինհռչակագիրը [27]:

ԿԱՊԿՈՒ երեխաներըպետքէկարողանանսովորելսովորականդպրոցներում, որտեղնրանցհամարստեղծվածկլինեներեխայակենտրոնմանկավարժականհիմքեր՝ուղղվածայդկարիքներիբավարարմանը [26]: Ներառական կրթությունը բնութագրվումէվեցառանձնահատկություններով՝

1. կրթությունըպետքէհիմնվիբազմազանության, այլոչթեմիանմանությանսկզբունքիվրա,

2. կրթականգործընթացըպետքէկազմակերպվիայնպիսիմեթոդներովևմոտեցումներով, որոնքուղղվածենյուրաքանչյուրերեխայիառանձնահատկություններիցբխողկարիքներիբավարարմանը,
3. դպրոցներըպետքէմշակենայնպիսիառարկայականպլաններ, որոնքկբալանսավորենմիասնականությունընևյուրահատկությունը,
4. դպրոցըպետքէբացահայտիևչեզոքացնիուսումնականկյանքումլիարժեքմասնակցությանըխոչընդոտողգործոնները բոլորաշակերտներիհամար,
5. Ներառական կրթությունընենթադրումէկրթականգործընթացներիկազմակերպմանևկառավարմանխորքայինևերկարաժամկետփոփոխություններ,
6. Ներառական կրթությունընենթադրումէաջակիցկառույցներիևռեսուրսներիստեղծում՝ուսուցչական, ադմինիստրատիվանձնակազմի, աշակերտներիևծնողներիևՆերառական կրթությանհամակարգիայլշահառուներիհամար[29; 14-15]:

ՀՀ-ումԿԱՊԿՈՒանձանցկրթությանմասինօրենքընևհամապատասխանաբար՝ներառականկրթությանՀՀծրագիրը ընդունվելէ 2005թ-ին:ՎերջինսամրագրումէՀՀ-ումներառականկրթությանիրականացմաներեքհիմնակետայինդրույթներ.

1. ԿԱՊԿՈՒերեխաներըմյուսներիհետհավասարիրավունքներունենընտրելուհանրակրթականհաստատությունընևպարտադիրպետականկրթականծրագրերը,
2. ԿԱՊԿՈՒերեխաներնիրավունքունենօգտվելուհատուկմանկավարժական, առողջապահական, հոգեբանականևայլծառայություններից,
3. երեխայիհամակողմանիբնականոնզարգացմանտեսանկյունիցնախընտրելիէ կրթությանկազմակերպումըառանցընտանիքիցևհասարակությունիցնրաառանձնացման:

ԿԱՊԿՈՒանձանցկրթությանմասինօրենքընԿ-ընսահմանումէորպեսԿԱՊԿՈՒանձանցկրթությանհամարառանձնահատուկպայմ

աններիապահովմանմիջոցովնրանցհամատեղուսուցումըհանրակրթականեւմասնագիտականուսումնականհաստատություններումնմանպայմաններիկարիքչունեցողանձանցհետ: Օրենքիայսսահմանումըարդենիսկենթադրումէ, որխոսքըգնումէոչթեբոլորաշակերտներիհամարհավասարկրթականհնարավորություններիստեղծմանևառանձնահատկություններիցբխողկարիքներիբավարարմանմասին, այլպարզապեսհամատեղուսուցմանկազմակերպմանևավելին, ԿԱՊԿՈՒանձանցհամարառանձնահատուկպայմաններիստեղծմանմասին: Այլկերպասած, դպրոցըապահովումէինտեգրում՝համատեղուսուցմանկազմակերպմանմիջոցով: ՕրենքիհամաձայնԿԱՊԿՈՒանձանցկրթությունըկարողէիրականացվելպետականևոչպետականհանրակրթական, մասնագիտականուսումնականհաստատություններում, որոնքապահովվածենկրթության առանձնահատուկպայմաններով:

Ներառական կրթության նպատակը ոչմիայն դպրոցներում սովորողների ուսուցման կազմակերպումն է,այլև ընտանիքում և համայնքում նրանց աջակցելն է: Ավելին, կրթությունը պետք է դիտարկել որպես մի այնպիսի գործընթաց, որն իրականանում է ոչ միայն ուսումնական հաստատություններում, այլ նաև ընտանիքում և համայնքում: Այսպիսով, կրթական գործընթացում ընտանիքի և համայնքի ակտիվ մասնակցությունը ուղղակի անհրաժեշտ է:

Ծնողներիազդեցություններքոբազմաթիվերեխաներ՝հատկապեսմիջինևավագդասարանների, ուղղակիհրաժարվումենոչմիայնմասնակցելանհատականպարապունքներին/աշխատանքներին, այլև, անգամ, հրաժարվումենօգտվելԿԱՊԿՈՒերեխաներինհատկացվողսննդից, որպեսզիհամադասարանցիներիկողմիցծաղրիչարժանանան: Այսխնդիրըհատկապեսակտուալէտղաերեխաներիշրջանում: ԿԱՊԿՈՒերեխաներինշրջապատիցամենկերպթաքցնելումիտումը (իսկթաքցնելուպատճառըհաշմանդամությունն է) խոսումէայնմասին, որդպրոցներումներառականկրթությունըներդնելունզուգահեռպետքէբավարարաշխատանքտարվինանհամայնքիհետ, որպեսզիներառականությանգաղափարըընդգրկիոչթեառանձինկառույցներ,

այլողջմիջավայրը: Այսօր, հատկապեսգյուղականհամայնքներիմիզգալիմասումնմանմթնոլորտնիսպառբացակայումէ:

Հանդուրժողականության գործընթացի հաջող իրականացման ընթացքում կարևոր է ուսուցիչների, ծնողների և աշակերտների համագործակցությունը, որը կոչվում է թիմային աշխատանք: Այս գործընթացում ներգրաված յուրաքանչյուր անդամ սերտորեն կապված են միմյանց հետ և իրենց ջանքերը ներդնելով իրականացնեն արդյունավետ գործընթաց:

Հանդուրժողականության ուսուցման նպատակը երեխաների մեջ համագործակցության, իրավահավասարության, արժանապատվության, ապրումակցման արժեքների ձևավորումն է:

Համագործակցության ուսուցման կարևորագույն արդյունքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն են, քանի որ վերջիններս ձևավորում են մարդկանց հետ շփման արդյունքում:

Դրական ինքնագնահատական ունեցող մարդն ավելի հեշտ է համագործակցում՝ ընդունելով խմբի բոլոր անդամների ներդրումները:

Համագործակցության վրա հիմնված ուսուցման ընթացքում, աշակերտն իր դասարանն ընկալում է որպես փոխկապակցված համակարգ, ոչ թե առանձին անհատների խումբ:

Ծնող-մանկավարժ-երեխա եռամիասնությունը չափազանց կարևոր է ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորման գործում: Միայն նրանց երեքի միասնական աշխատանքի շնորհիվ կարելի է գրանցել հաջողություններ և չափազանց արդիական և պատասխանատու գործում:

Սակայն հատկապես պետք է առանձնացնել մանկավարժի աշխատանքը այս համատեքստում, քանի որ նա է շարժող մեխանիզմը, նա է ուղորդողը, նա է ոգևորողը:

Ծնողների հետ համագործակցությունը հաջող իրականացնելու համար, մանկավարժը պետք է ունենա ծնողների հետ շփվելու մանկավարժական էթիկա: Ուսումնադաստիարակչական աշխատանքներում ուսուցիչը ստեղծի այնպիսի իրավիճակներ, որպեսզի ծնողները ակտիվորեն շփվեն միմյանց հետ և ձևավորի ծնողական համերաշխ կոլեկտիվ: Միմյանց հարգող, գնահատող, աջակցող:

Հանդուրժող մարդու կերպարի կրողը պետք է լինի մանկավարժը, ով իր օրինակով ցույց կտա միմյանց հանդեպ հանդուրժողականության ճիշտ ճանապարհը: Այսօր կան շատ ծնողներ, ովքեր բավարար տեղեկացված չեն, չունեն բավարար կրթական բազա, ունեն կարծրատիպային մտածողություն ԿԱՊԿՈՒ երեխաների մասին, չգիտեն նրանց հետ հաղորդակցման ձևերը և, բնականաբար, նույնն էլ փոխանցում են իրենց երեխաներին: Մանկավարժի առաքելությունը այս գործում ծնողների և նաև երեխաների համոզմունքների և գիտակցության վրա ներգործելն է, միմյանց և հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաներին հանդուրժել, օգնել սովորեցնելն է, ինչպես նաև այս եռամիասնության արդյունավետ համագործակցության ապահովումը:

1.3 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորման մանկավարժական պայմանները

Արդի աշխարհում հանդուրժողականությունն առավել արդիական և բազմակողմանի քննարկման ենթակա թեմաներից է հասարակական կյանքի բոլոր մակարդակներում՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր (կրոնական):

Մանկավարժության մեջ անձի հանդուրժողականության ձևավորման խնդիրը կրթության մեջ անհատականության վրա հիմնված մոտեցման ժամանակակից հայեցակարգի մշակման կարևոր ուղղություններից է, քանի որ այն արտացոլում է առաջնահերթ արժեքներ, վարքագծային մոդելավորում,

շեշտադրում է անձի կայունությունը և հանդուրժողական վերաբերմունք մարդկանց կարծիքների և տեսակետների նկատմամբ:

Մանկավարժների՝ հանդուրժողականության զարգացմանն ուղղված նպատակային աշխատանքի, պետական կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի շնորհիվ կարելի է ապահովել հանդուրժող սոցիալական միջավայրի ստեղծման որոշակի նախադրյալներ: Շատ կարևոր է երեխաների ու երիտասարդների հետ աշխատանքը, ուղղված կարծրատիպերի կոտրմանը, որպեսզի նրանք կարողանան լայն աշխարհայացք ձևավորել, քննադատել և ընդունելքննադատություն:

Այսօրհանդուրժողականությանձևավորմանանհրաժեշտությունըկարևորվ ածէմանկավարժականտեսության մեջ, սակայնայդանձնայինորակիձևավորման, բարոյականարժեքիդաստիարակությանմեխանիզմներըդեռևսբավարարչենմշա կվածկրթականծրագրերում, դաստիարակությանև ուսուցմանգործընթացներում: Ուստիժամանակակիցմանկավարժությանկարևորագույնխնդիրներիցմեկըհանդ ուրժողականությանդաստիարակությանհիմնախնդիրնէ[2;4]:

Հանդուրժողականության դաստիարակությունը մի երևույթ է, որը միտված է ժողովրդավար, ազատ և արդար հասարակության ձևավորմանը՝ նպաստելով ապրել և համագործակցել սովորեցնելուն: Այն խթանում է այնպիսի արժեքներ ու սկզբունքներ, ինչպիսիք են՝ ազատությունը, բազմակարծությունը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը:

Հանդուրժողականության դաստիարակությունը հասարակության միասնականության, փոխըմբռման, միջմշակութային երկխոսության գործոն է, որը նպաստում է մարդկանց միջև խաղաղ, ներդաշնակ հարաբերությունների խթանմանը և մերժում խտրականությունը, բացառում բռնությունը, ծայրահեղական մտածելակերպն ու վարքագիծը:

Հանդուրժողականության ուսուցման նպատակն է՝ աշակերտներին օգնել ձեռք բերելու որոշակի կարողություններ, ինչպիսիք են՝

- Արդյունավետ հաղորդակցվելը և համագործակցելը,
- Տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու կարողությունը,

- Այլոց հետ կառուցողականորեն, համերաշխ հարաբերվելու կարողությունը,
- Ընտրություն կատարելու, որոշում կայացնելու և խնդիրներ լուծելու ունակությունը,
- Կոնֆլիկտների խաղաղ կարգավորումը՝ բանակցելու, միջնորդության միջոցով,
- Իրավունքների և պարտականությունների փոխկախվածության գիտակցումը, պատասխանատվություն կրելու և փոխօգնության պատրաստակամությունը,
- Տարբերությունները ճանաչելու և ողջունելու ունակությունը,
- Շրջապատի հանդեպ հոգատար վերաբերմունքը և քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը:

Հիշատակված գիտելիքները, վերաբերմունքներն ու հմտություններն արդյունավետ կերպով ուսուցանելու համար կարևոր է փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտի ապահովումը [2;5] :

Հանդուրժողականությունը մի կողմից կարելի է դիտարկել, որպես կրթական խնդիրների լուծման միջոց, իսկ մյուս կողմից, որպես դաստիարակության նպատակներից մեկը:

Հանդուրժողականությունը տարբեր դրսևորումներ ունի՝

- անձնական,
- հասարակական՝ որն արտացոլվում էբարոյականության, բարքերի, հասարակակն հոգեբանության և գիտակցության մեջ,
- պետական՝ որն արտացոլվում է օրենսդրության և քաղաքացիական գործունեության մեջ [13; 416]:

Աշակերտների միջև փոխադարձ շփումը բացում է ազատ դրսևորումներ: Աշակերտը չի վախենում, որ իրեն սխալ կհասկանան, որ նրա վրա կսկսեն ծիծաղել, որ նա անզգույշ ոգևորությունից կկորցնի իր հեղինակությունը, և ահա այդ ժամանակ՝ նա հետաքրքրական կդառնա շրջապատի համար, քանի որ նրա ազատ «Ես»-ը ազատ դրսևորման մեջ դառնում է իմաստալից:

Աշակերտը սկսում է իրեն հարմարավետ, վստահ զգալ և իրեն զգում է արժանապատիվ զգացումով, նրա ինքնագնահատականը և ինքնադաստիարակությունը բարձրանում է, որը ստեղծում է բարենպաստ

հոգեբանական պայմաններ ուսման և սոցիալականացման համար:

Հանդուրժողականության դաստիարակության գործընթացում կարևոր են մանկավարժի հանդուրժողական որակները, որոնք ակնհայտորեն համահունչ են ուսուցիչ-դաստիարակի մասնագիտական որակներին: Ուստի, ուսուցչի ոչ միայն մասնագիտական, այլև անձնային որակները ուսումնական գործընթացի արդյունավետության երաշխիք են: Հմուտ ուսուցչի անձնային և մասնագիտական որակները միասնական են և դրսևորվում են մանկավարժական գործունեության ընթացքում ամբողջական ձևով:

Հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ կապված ցանկացած ուսումնական հաստատության զարգացման հիմնական խնդիրներից մեկը ուսուցիչների, մասնագետների և ծնողների շրջանում մանկավարժական հանդուրժողականությանձևավորումն է, այսինքն՝ երեխային հասկանալու և ընդունելու ունակություն, ինչպես նաև նա է այլ արժեքների, մտածողության, տրամաբանության և այլձևերի կրողը,իր հասակակիցներին դաստիարակելու՝ տեսնելով հարգալից վերաբերմունք հաշմանդանություն ունեցող երեխաների նկատմամբ [8 ;17-22]:

Այսպիսով, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորման համար անհրաժեշտ են ապահովել հետևյալ **մանկավարժական պայմանները՝**

1. Ծնողների հետ իրականացնելմշտականլուսավորչական աշխատանքներ/սեմինարներ, տեսական նյութի տրամադրում, անհատական զրույցներ, կլոր սեղաններ, բանավեճեր և այլն/:
2. Աշակերտների մեջձևավորելառողջ բարոյահոգեբանական միջանձնային փոխհարաբերություններ /մանկավարժ-աշակերտ, աշակերտ-աշակերտ/:
3. Բացահայտել դասարանի յուրաքանչյուր երեխայի՝ այդ թվում նաև ԿԱՊԿՈՒ, ուժեղ ու շահեկան կողմերն ու ներկայացնել նրան այդ դիտակետից:
4. Ապահովել մանկավարժ–ծնող-աշակերտ եռամիասնական ակտիվ համագործակցություն:
5. Իրականացնելնպատակաուղղված դաստիարակչական աշխատանքներիեքիաթների, դերախաղերի, տիկնիկային

ներկայացումների, կարճամետրաժ մուլտֆիլմերի և այլ միջոցներով:

6. Կազմակերպելնպատակային միջոցառումներ, որոնց ներգրաված կլինեն և կկարևորվեն բոլոր աշակերտները: Նրանց միջև ապահովել փոխադարձ շփում և մտերիմ հարաբերություններ:
7. Ուսումնառության ընթացքում կազմակերպել խմբային, համագործակցային աշխատանքներ, որոնցում կկարևորվի թիմային պրոդուկտը և պատասխանատվություն կդրվի և կարժևորվի յուրաքանչյուր աշակետի ներդրումը թիմի աշխատանքներում:

ԳԼՈՒԽ 2.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Հետազոտության կազմակերպման ընթացքը

Հետազոտությունը իրականացվել է ԿԱՊԿՈՒ աշակերտներ ունեցող տարբեր դպրոցներում

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- դիտում,

- զրույց,
- հարցաթերթեր(ուսուցիչ, աշակերտ, ծնող)
- հետազոտությունների արդյունքների ներկայացման մաթեմատիկական մեթոդ/դիագրամների կազմում/:

Հետազոտությունն անցկացվել է հետևյալ հաջորդականությամբ.

1. Հետազոտական աշխատանքի ժամանակացույցի կազմում: Մեր կողմից ընտրվել է ուսուցման 1-ին կիսամյակը:
2. Հետազոտության համար համապատասխան մեթոդների ընտրություն:
3. Ընտրված մեթոդների անցկացում:
4. Արդյունքների վերլուծություն:

2.2 Հետազոտությանարդյունքներիվերլուծություն

Դիտման մեթոդ

Դիտման մեթոդը կիրառվել է նպատակ ունենալով բացահայտել՝ ԿԱՊԿՈՒերեխաների փոխհարաբերությունները մյուս երեխաների հետ դասապրոցեսում և դասապրոցեսից դուրս:

Դիտման մեթոդի կիրառման ընթացքում պարզ դարձավ,որ հանդուրժողականությունը դասընկերների կողմից ԿԱՊԿՈՒ աշակերտների նկատմամբ տարբեր կերպ է դրսևորվում՝ դասարանի աշակերտներից ոչ բոլորն են հանդուրժողական վերաբերմունք դրսևորում տվայլ երեխաների նկատմամբ:ԿԱՊԿՈՒ երեխաները նույնպես անհանդուրժողականություն են դրսևորում իրենց դասընկերների նկատմամբ:

Զրույցիմեթոդ

Հետազոտության շրջանակներում զրույց ենք իրականացրել կրտսեր դպրոցականների հետ: Զրուցելով ԿԱՊԿՈՒ երեխաների վարքը կրկնօրինակող երեխաների հետ պարզեցինք նրանց նմանատիպ վարքի շարժառիթները. Մասնավորապես՝

- 56%-ը ցանկանում են արժանանալշրջապատի ուշադրությանը,

- 20%-ը կրկօրինակումը վերածում ենխաղի,
- 10%-ը կրկնօրինակում են ծաղրելու նպատակով,
- 14%-ը կրկնօրինակմամբ փորձում էին հասկանալ, թե ԿԱՊԿՈՒ դասընկերները ի՞նչ են զգում նման անկանոն շարժումներ անելիս:

դիագրամ 1



Աշակերտների հետ զրուցեցինք նաև ընկերասիրության նրանց պատկերացումների մասին: Երեխաների պատկերացմամբ ընկերությունը միմյանց օգնելն է, իրար հետ ժամանակ անցկացնելը, խաղալը: Օրինակ՝ 4-րդ դասարանում կար մի աշակերտուհի, որը դժվար էր քայլում, ընկերները նրան օգնում էին անգամ շարժախաղերի ժամանակ, ինչպես նաև դասամիջոցներին նրան ներգրավում էին աշխույժ խաղերի մեջ և շալակած վազելով տանում էին իրենց հետ: Սակայն դասարանում կային երեխաներ, ում հետ ոչ բոլորն էին ցանկանում ընկերություն անել: Դրանց մեջ հիմնականում ԿԱՊԿՈՒ երեխաներն էին:

Հարցաթերթերիմեթոդ:

Հարցաթերթիկային ուսումնասիրություններն իրականացվել են անանուն:

Աշակերտների համար նախատեսված հարցաթերթիկ վերլուծություն

Այն հարցին, թե հարմարավետ ես քեզ զգում դպրոցում, 50աշակերտներից 83%-ը պատասխանել է այո, իսկ 9-ը դժվարացել է պատասխանել: 9% աշակերտներից 8%-ը ԿԱՊԿՈՒ երեխաներ են:Հետևաբար, 10-ը ԿԱՊԿՈՒ երեխաներից 8%-ը դպրոցում ունենում են անհարմարավետության որոշակի զգացողություններ:**Դիագրամ 2**



Այն հարցին, թե կան դասարանում երեխաներ, ովքեր քեզ ծաղրում են 90%-ը պատասխանեց, որ իր դասընկերների կողմից ծաղրանքի չի արժանանում, իսկ 10%-ը դժվարանում էր պատասխանել:

դիագրամ 3



Իսկ այն հարցին, թե կան երեխաներ, ում դու ես ծաղրում 50 հարցվողներից 47-ը պատասխանել են, որ ոչ չկա, 1-ը այո կան այնպիսի երեխաներ որ ծաղրում եմ, իսկ 2-ը դժվարանում էր պատասխանել այս հարցին:

Դիագրամ 4



«Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան քո և քո ընկերների միջև» հարցին 50 աշակերտներից 15-ը նշել է արտաքին տեսքի նմանություններ, 7-ը բնավորության գծերի նմանությունն ու տարբերությունները: 23-ը նշել էր, որ իր ընկերների հետ ունեն նախասիրությունների նմանություններ և տարբերություններ, 5-ը թվարկել են ֆիզիկական կարողությունների տարբերություններ և նմանություններ:

Դիագրամ 5



«Դուք պիտակավորում եք Ձեր դասընկերոջը: Եթե այո, ինչո՞ւ»: Հետրյալ հարցին 50 երեխաներից՝ 48-ը պատասխանել է ոչ չենք պիտակավորում, քանի որ ոչ ոք իրավունք չունի որևէ մեկին պիտակավորելու, այդպիսով կնեղացնենք մեր դասընկերոջը: Իսկ 2-ը պիտակավորում է ոչ թե նեղացնելու համար այլ զուտ ընկերական խաղի ժամանակ:

Դիագրամ 6



Ուսուցիչների համար նախատեսված հարցաթերթիկ վերլուծություն

Մանկավարժների շրջանում նախ ցանկացանք պարզել, թե նրանք ինչ են հասկանում հանդուրժողականություն ասելով: Հիմնականում նշվել էին հետևյալ պատասխանները՝ հանդուրժել նշանակում է՝

- 13%-ը այն կարծիքին են որ պետք է հարգել երեխայի կարծիքը, տեսակետը,
- 37%-ը ընդունել նրան այնպիսին ինչպիսին որ կա,
- 25%-ը հարգել ուրիշի գաղափարներն ու որոշումները, ապրումակցում, սխալներն ընդունելու կարողություն, ներողամտություն:
- Իսկ հարցվողներից 6%-ը պատասխանել էր, որ հանդուրժողականությունը այնպիսի վեհ գաղափար է,որ չես կարող արտահայտել բոլորի նկատմամբ: **Դիագրամ 7**



«Ի՞նչպես եք Ձեր աշակերտների մեջ հանդուրժողականություն դաստիարակում» հարցին 16 ուսուցիչներից՝ 25%-ը այս հարցին պատասխանել է, որ հեքիաթի միջոցով, 37%-ը՝ խաղի միջոցով, 19%-ը՝ անձնական ,19%-ը `տեղ է տալիս զրույցի մեթոդին: **Դիագրամ 8**

«Արդյոք տարբերություն դնում եք առողջ և ԿԱՊԿՈՒ երեխաների միջև»հարցից պարզ դարձավ, 16 ուսուցիչներից՝ 69%-ը տարբերություն չի դնում, քանի որ ինչպես առողջ երեխաները այնպես էլ ԿԱՊԿՈՒ երեխաները իրավունք ունեն կրթություն ստանալ: 12%-ը այն կարծիքին են,որ պետք է տարբերություն դնել ԿԱՊԿՈՒ և առողջ երեխաների միջև այն պատճառով, որ ԿԱՊԿՈՒ երեխաները ավելի ուշադրության, սիրո, ջերմության կարիք ունեն: Իսկ հարցվողների 19%-ը դեմ է որ առողջ երեխաների հետ սովորեն ԿԱՊԿՈՒ երեխաները, քանի որ առողջ երեխաները շատ հաճախ կրկնօրինակում են ԿԱՊԿՈՒ երեխաների վարքային դրսևորումները:**Դիագրամ 9**



Ծնողների համար նախատեսված հարցաթերթիկ վերլուծություն

Հետազոտության շրջանակներում հարց ուղղեցինք ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին, արդյոք «Ձեր երեխային հանդուրժում են»: Հարցումներից պարզ դարձավ, որ 15 ծնողներից 40%-ը այս հարցին պատասխանեց, որ դպրոցում շատ լավ են վերավերվում իրենց երեխաներին, աջակցում և օգնում են ամեն հարցով: Իսկ 60%-ը պատասխանեցին, որ իրենց երեխաներին չեն հանդուրժում և՛ ընկերների, և՛ ուսուցիչների կողմից ոտնահարվում են իրենց երեխաների իրավունքները: **Դիագրամ 10**



«Ինչպես եք, ընդհանուր առմամբ, գնահատում ներառական կրթության կազմակերպումը Ձեր դպրցներում» հարցից պարզ դարձավ, 50 ծնողներից 74%-ը այն կարծիքին են, որ դպրոցի պայմանները բավարար չեն լիարժեք կրթություն ապահովելու համար: 12%-ը գտնում էր, որ առանց այդ էլ գերծանրաբեռնված դասարանները չափից ավելի մեծ բեռ է դառնում ուսուցիչների վրա և դպրոցն էլ համապատասխան պայմանները չունի, այդ ծանրաբեռնվածությունը նաև ծնողների ուսերին է: Ծնողներից 8%-ը այն կարծիքին է, որ դպրոցներում բացասական են վերաբերվում ԿԱՊԿՈՒ երեխաներին: Այս պատճառով և՛ ուսուցիչները, և՛ ծնողները աշխատելու տեղ ունեն: 6%-ը տեղյակ չէր թե դպրոցում ինչպես են կազմակերպում ներառական կրթությունը:

դիագրամ 11



Հետազոտության կարևոր նպատակներից մեկն էր պարզել, արդյոք ծնողները ինչպես են վերաբերվում, երբ իրենց երեխաների հետ սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաները: Արդյունքում պարզ դարձավ, որ 50 հարցվողներից 20%-ը նորմալ է վերաբերվում, երբ դասարանում կա ԿԱՊԿՈՒ երեխաներ: 30%-ը խստիվ դեմ է, որ իրենց երեխաների հետ սովորեն ԿԱՊԿՈՒ երեխանները, քանի որ նրանք ավելի շատ խանգարում են դասապրոցեսը: 50%-ը լավ են վերաբերվում, քանի որ դասղեկների շնորհիվ իրենք՝ ծնողները իրազեկ են հատուկ կարիք ունեցող երեխաների կարգավիճակին, ըստ այդմ էլ առանձնազրույցների շնորհիվ իրենց երեխաները ընդունում են ԿԱՊԿՈՒ երեխաներին այնպես, ինչպես մյուսներին:

Դիագրամ 12



«Ի՞նչառաջարկներունեքներառականկրթությանարդյունավետությունը արելավելուհամար» այս հարցին ծնողները պատասխանեցին հետևյալ կերպ՝Ծնողներից 6%-ըառաջարկներ չունեին: 4%-ը այն կարծիքին էին, որ պետք է վերացնել ներառական կրթությունը: 12%-ը առաջարկեցին, որ խուլ գյուղերում էլ գործի ներառական ծրագիրը, քանի որ շատ ծնողներ հնարավորություն չունեն գյուղերից քաղաք բերել իրենց երեխաներին: 16%-ը

առաջարկում էին, որ իրենք էլ՝ ծնողները իրենց ներդրումն ունենան ներառական կրթության բարելավման գործում: 20%-ը առաջարկել են, որ ավելի շատ իրազեկվածություն ոչ միայն երեխաների շրջանում լինի այլ նաև ծնողների, քանի որ եթե ծնողը բացասական է վերաբերվում ապա նույն ձև կվերաբերվի իրենց երեխաները ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ:42%-ը առաջարկում է, որպեսզի ներառական կրթությամբ զբաղվող մասնագետները լինեն հոգեբանորեն պատրաստված և դիմակայեն առաջացած խնդիրներին: Հատուկ մասնագետի և ծնողի միջև լինի համագործակցություն, որ ուսուցումը լինի լիարժեք: ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված դասասենյակը լինի համապատասխան սարքավորումներով և խաղերի համար նախատեսված խաղալիքներով:**Դիագրամ 13**



ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուրժողականություն ձևավորելու նպատակով մենք կազմեցինք դասվարի կիսամյակային դաստիարակչական աշխատանքների պլան, որի մի քանի բաղադրիչներ մենք իրականացրեցինք հետազոտության շրջանակներում:

Դասվարի դաստիարակչական աշխատանքների պլան

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	**Խնդիրները**	**Կատարման ժամկետը**	**Կատարողներ**
Դ/ժ Համագործակցային« Օգնության ձեռքեր»	Հնարավորություն է ստեղծում, արդյունավետ հարաբերվելու, միմյանց նկատմամբ հավասարության գիտակցումը, արժեվորել դիմացինին օգտակար լինելու կարևորությունը:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ
Դ/ժ կոնֆլիկտների հաղթահարում:«Արի հաշտվենք» պատմվածքի քննարկում	Նպաստում է արդյունավետ հաղորդակցման հմտությունների ձևավորմանը, վարքագծի հնարավոր հետևանքները գիտակցելուն:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ
Դ/ժ բաց դաս «օգնենք միմյանց»	Նպաստում է շփմանը, սովորեցնում է վերլուծել, խթանում է ստեղծագործական մտածողությանը, ինչպես նաև միմյանց օգնելու պատրաստակամության ձևավորմանը:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ
Հանդուրժողականության ուսուցումը հեքիաթի միջոցով: Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» հեքիաթը	Խթանում է վերլուծական մտածողության զարգացմանը, որոշում կայացնելու հմտության ձևավորմանը, ուրիշի իրավունքները հարգող, հոգատար, ապրումակցող, գործուն դիրքորոշում ունեցող անհատի ձևավորմանը:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ
«Կապույտ շնիկը» մուլտֆիլմի դիտում և քննարկում	Օգնել երեխաներին գիտակցել, թե ինչ է իրավունքը, որոնք են իրենց իրավունքները, որպեսզի կարողանան ապրումակցել նրանց ում իրավունքները ոտնահարվում են: Պատրաստ լինեն պայքարելու թե իրենց և թե ուրիշների իրավունքների համար:Անկախ ծագումից, մաշկի գույնից կամ հավատքից հավասար են:Պայքարել անարդարության և բռնության դեմ:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ

Հանդուրժողականության ուսուցումը դերախաղի միջոցով	Նպաստում է միմյանց նկատմամբ հանդուրժող վերաբերմունքի ձևավորմանը, միմյանց օգնելու պատրաստակամության ամրապնդմանը:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ
Ջ. Ռոդարիի « Հեքիաթի շիլաշփոթ» մեթոդի միջոցով հորինել հեքիաթ	Նպաստում է սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորմանը, և երեևակայության զարգացմանը:	1-ինկիսամյակ	Ուսուցիչ, աշակերտ

Այսպիսով, մեր հետազոտությունից պարզ դարձավ, որ տարրական դասարաներում առողջ և ԿԱՊԿՈՒ երեխաների միջև եղած փոխհարաբերությունները,ընդհանուր առմամբ,կայուն և դրական հիմքերի վրա են դրված:Հետազոտության արդյունքում պարզ դարձավ նաև, որ ուսուցիչների մեծ մասը դրականորեն է ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավածությանը ակտիվ պրոցեսում, սակայն նրանց մեծ մասը ունեն տեղեկացվածության և մեթոդական պատրաստվածության պակաս:Ծնողների ընկալումները ԿԱՊԿՈՒ երեխաներին ևս միանշանակ չէ: Նրանց մի մասը կարևորում էԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցներում, մի մասը համաձայն չէ, որ իրենց երեխաների հետ սովորեն ԿԱՊԿՈՒերեխաներ:

Ըստ մեր հետազոտությունների մանկավարժները և հատկապես ծնողները սակավ են ինֆորմացվածթե ներառական կրթության մասին ընդհանուր առմամբ, և թե ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուրժողականության անհրաժեշտության մասին: Ուստի մեր հետազոտության շրջանակներում իրականացրեցինք տեղեկատվական սեմինար-բանավեճ մանկավարժների և ծնողների համար, իսկ աշակերտների համար կազմակերպեցինք նպատակային մուլտֆիլմի դիտում և քննարկում, դերային խաղ ու հեքիաթի քննարկում /Հ.Ք. Անդերսենի «Անճոռնի ճուտիկը»/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույնհետազոտությանշրջանակներում, կատարելով մի շարք ուսումնասիրություններ, հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Հանդուրժողականություն հասկացությունը մեր իրականության մեջ դեռևս չունի միանաշանակ ընկալում: Այն հաճախ նույնացվում է ամենաթողության կամ շրջապատի հանդեպ անտարբեր վերաբերմունքի հետ: Այդ խնդիրը առկա է նաև կրթության համակարգում՝ հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաների առկայության պայմաններում:
2. Տարրական դասարաններում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորման գործում չափազանց կարևոր է ծնող-մանկավարժ-աշակերտ եռամիասնությունը: Միայն նրանց երեքի միասնական աշխատանքի և համագործակցության շնորհիվ կարելի է գրանցել հաջողություններ և չափազանց արդիական և պատասխանատու գործում:
3. Մեր հետազոտությունները ցույց տվեցին, այսօր կրթության համակարգը, ցավոք, շարունակում է մնալ սելեկտիվ: Այսինքն՝ մանկավարժը աշխատել է այն աշակերտների հետ, ում սովորելու տեմպերը համապատասխանում են ուսումնական ծրագրի տեմպին: Այն աշակերտները, ովքեր սովորելու տեմպը ավելի դանդաղ է, աստիճանաբար դուրս են մնում սովորելու գործընթացից: Այստեղ ամենաշատը տուժում են ԿԱՊԿՈՒ երեխաները: Երեխաներին դասապրոցեսին ներգրավելու գործընթացը դեռևս բարելավման կարիք ունի:
4. Մեր հետազոտությունները ցույց տվեցին նաև, որ տարրական դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորումը կախված է մի շարք գործոններից՝ դասագրքերի բովանդակությունից, արտադասարանային պարապմունքների բովանդակությունից ու անցկացման ձևից, մանկավարժների և ծնողների տեղեկատվածության աստիճանից, ընտանիքների դիրքորոշումներից, ՁԼՄ-ից և այլն: Այս գործում նշանակալի դերակատարում ունի կրթության համակարգը՝ ընդհանրապես և մանկավարժների պրոֆեսիոնալիզմը՝ մասնավորապես:

Առաջարկություն՝

Ելնելով վերը նշված եզրակացություններից, ինչպես նաև հայ հասարակության մեջ ԿԱՊԿՈՒ երեխաների ոչ միանշանակ ընկալումներից՝ առաջարկում ենք ընդունված կարծրատիպերը կոտրելու նպատակով ԶԼՄ-ով իրականացնել ակտիվ տեղեկատվական քարոզ, իսկ մանկավարժների շրջանում տեղեկատվական բացը լրացնելու համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բացֆայլներառականկրթությանմասին - Եր., 2004
2. Դասղեկի ձեռնարկ «Հանդուրժողականության ուսուցում» Երևան 2008.,

3. Է. Աղայան«Արդի հայերենի բացատրական բառարան»,«Հայաստան» հրատարակչություն, Երևան 1976,
4. ՄիավորվածԱզգեր., 1993 թ
5. ՅՈՒՆԵՍԿՕ-իգլխավորկոնֆերանսիքսանութերորդնստաշրջան, « Հռչակագիրհանդուրժողականությանսկզբունքներիմասին», Փարիզ, 16 նոյեմբեր , 1995թ.
6. Асмолов А. Г. Толерантность: различные парадигмы анализа // А. Г. Асмолов // Толерантность в общественном сознании России. М., 1988,
7. Декларация принципов толерантности: утв. резолюцией 5.61 Генеральной конференцией ЮНЕСКО от 16 ноября 1995 г. // Защити меня! - 2004.
8. Клунова Н,В, Как воспитать толерантность, Дополнительное образование,-2006,-N3
9. Ковалева А,С, «Спецальная педфгогикф и психология» Аспекты воспитания толурантности в условиях инклюзии, 2018
10. Круглова Н. Виртуальность и реальность толерантности // Виртуальное пространство культуры. СПб., 2000.
11. Лосев А. Ф. История антинохй эстетики. – М.: Искуццтво, 1963-1994, в 8 т.-Т.5.Ранний эллинизм, -М.: Искуццтво, 1979.
12. Мириманова., М. С. «Конфликтология» 2003г.,
13. Мчедлов М,под общ,Педакцией «Толлерантностъ» Инцтитут комплексных соцалных исследований российцкой Академии наук. М.Республика, 2004.-416ц.,при содейцтвии
14. Николсон П. Толерантность как моральный идеал / / Толерантность: Вестн. УрМИОН.